

(այն է) յակոշք որ ասի ի Հայս» (անդ, ժԹ):

Թոնիր: Լծորդ պրս. տանուրին՝ որ է փուռն, Թոնիր (Հիւրշ. 155), եւ հոմանիշ յն. κλιβανοςին, նպատակ ունէր պարզապէս հաց ու կարկանդակ եփելու թէ Հրէից մէջ (Ղեւտ. Բ, 4. Իջ, 26) եւ թէ արեւմտեայց (Գար. Ա, 1247): Նոյն վախճանին կը գործածէին զայն նաեւ Հայք, ըստ որում Ալաւկայ որդին յայտնապէս կ'ըսէ՝ թէ անոր մէջ «հաց» կ'եփէին (Գ), եւ ըստ վաստակոց գրոց՝ Թուզ ալ կը չորացնէին (137): Սա արեւմտեայց քով շարժական ու ձեւով զանազան (Գար. անդ), մեր մէջ հաւանօրէն նման էր այժմէնին. այս ինքն փորուած գետնի մէջ, աղիւսեայ բոլորակ որմով: Այս պատճառաւ ալ Ալաւկայ որդին մինչդեռ պղծեալ խեցեղինաց համար կը զրէ՝ թէ «խորտակեացեն» կամ «կոտորեացեն», Թոնիրն ըստ պարագային «քակեցի ի հիմանց» կամ «մի քակեցի», կ'ըսէ, «զի անհնարին (ծանր) է պատրաստութիւնն» (Գ):

Թոնիրոշք: Տեսանք արդէն Ալաւկայ որդույն վերոյիշեալ օրինակին մէջ. Թոնրին պէս գետնափոր հնոց մը, որոյ էութիւնն ու պաշտօնը գուշակելի է յարակից բացատրութենէն. «եւ այլ ամանքն